փառաւորելու և պատուելու պատարագաբ և երգաբ զՏիրամայրս մեր։ Ա. Աստուածամայրն Ջերմեռանդութեան համար կայ տպուած լեհ լեզուով աղօթամատոյց – երգարան մի, որ զայս վերնագիրս կը կրէ. « Երկրպագութիւն մեղաւորին 'ի պատիւ և 'ի փառս Սրբուհւոյ Կուսին Մարիամու, որ հասանէ յօգնութիւն հաւատացելոյն հրաշափառապէս առ պատկերին որ կայ 'ի ժողովրդապետական եկեղեցւոջ Հայոց 'ի Կամենից Փոտոլեան, յանուն Նիկոլայ աքանչելագործ եպիսկոպոսին Միւռոնայ »· որ է տպագրեալ 'ի Կամենից, 1860։ Այդ երգարանը շատ անգամ տպագրուած է. 1860ին տպագրուածին սկիզբը հետեւալ տեղեկութիւնը կը կարդանք. « Ծանօթութիւն զպատկերէ Սրբուհւոյ Կուսին Մարիամու, որ համբաւեալն է հրաշագործութեամբ յեկեղեցւոջ Հայոց 'ի Կամենից »։ — Մինչև ցարդ եղած մանր հետազօտութիւնք, ինչպէս եկեղեցւոյ դիւանին, նոյն և այլ տեղեր չտուին մեզի հաւաստի տեղեկութիւնք Հրաշագործ պատկերին ծագման կամ հնութեան մասին. վասն զի ամենայն դիւանական գրուածք Հայոց եկեղեցւոյն՝ կորսուած են Թուրքաց 'ի Փոտոլիա յարձակման միջոց։ Ստիպուած եմ հաւաքելու հաւատացելոց աւանդութեամբ պահածը, մասնաւորապէս Հայոցը։ Այդ աւանդութիւնք ցայսոր պահուած են անայլայլակ առ Ջերմեռանդ հաւատացեալս։ Հաւաստիք են աւանդութեանցս հին աղօթամատոյցք, նորատիպքն կրած են սակաւ այլայլութիւնք. մինչդեռ հինք՝ տասն տպագրութեամբ 'ի լոյս ընծայուած են անփոփոխ։

Հին աղօթամատոյցք միակ տպագրեալ յիշատա-